

**ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի նիստի համառոտ ներկայացում
Մարտի 15, 2007, ժամը 15:10-17:30**

Օրակարգի հարց	Համառոտ նկարագրություն	Որոշում
<p>1. Շահառուների խորհրդի անդամ Լևոն Բարսեղյանի՝ ՇԽ անդամներին և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանին ուղղված նամակում տեղ գտած Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի վերաբերյալ հարցադրումների քննարկում (նամակը կցվում է):</p>	<p>ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի դեկավար Հ. Պետրոսյանը բացատրություն տվեց բոլոր առաջադրած հարցերին (տեղեկանքը կցվում է):</p> <p>Քննարկումների արդյունքում մասնակիցները բարձրացրեցին և քննարկեցին ծրագրի համար փոխարժեքի անկման հնարավոր վտանգի հարցը:</p>	<p>Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ որոշվեց՝ հանձնարարել կառավարման խորհրդի անդամներ հանդիսացող ՇԽ անդամներին մշակել առաջարկություն և ներկայացնել կառավարությանը առաջիկա կառավարման խորհրդի նիստի ընթացքում քննարկել պետական ծրագրերի համար ապահովագրական ֆոնդեր սահմանելու և/կամ փոխարժեքի որևէ նիշ որոշելու համար:</p>
<p>2. Համաձայնագիր ստորագրած երկրների ծրագրերի և գործող խորհրդակցական մարմինների գործունեության համառոտ ներկայացում և քննարկում.</p>	<p>Հայաստանի ծրագրի փոխտնօրեն Մ. Հիրնիակը ներկայացրեց այն հիմնական ուղղություններ, որոնց միջոցով ՇԽ-ը կարող է ծանոթանալ ՀՄԿ պահանջները բավարարող երկրների Շահառուների խորհուրդների աշխատանքներին:</p>	<p>Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին ներկայացված առաջարկություններից հիման վրա հանդես գալ նախաձեռնությամբ, մասնավորապես Վաշինգթոնում կայանալիք առաջիկա հանդիպման ընթացքում քննարկել ՇԽ տարբեր ներկայացուցիչների կլոր սեղան-հանդիպում կազմակերպելու հարցը:</p>
<p>3. Մրցութային հանձնաժողովներում ՇԽ ներկայացուցիչների հաստատում.</p>	<p>ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Ա. Հովսեփյանը ներկայացրեց համապատասխան հանձնաժողովները և այդ հանձնաժողովների կազմում ՇԽ ներգրավվածության հարցը: Ըստ այդմ ՇԽ անդամները քննարկեցին և որոշեցին, ովքեր կներգրավվեն հանձնաժողովներում:</p>	<p>Համապատասխան անդամների ընտրությունը հաստատվեց:</p>
<p>4. Շահառուների խորհրդի առաջիկա ընտրությունների քննարկում.</p>	<p>Նիստի մասնակիցները քննարկեցին և որոշում կայացրեցին ՇԽ առաջիկա ընտրությունների հետ կապված հիմնական հարցերի շուրջ:</p>	<p>1. ՇԽ 2006-2007 գումարման կազմի լիազորությունների ավարտը համարել սեպտեմբերի 29, 2007;</p> <p>2. Քայլեր նախաձեռնել, որպեսզի ՇԽ կազմից 5 անդամները, ովքեր ընտրվել էին</p>

		<p>երկու տարի ժամկետով, շարունակեն իրենց պարտավորությունները, որպես ՇԽ անդամներ ևս մեկ տարի՝ վերանայելով ՀՄՀ կառավարման համաձայնագրի համապատասխան կետը;</p> <p>3. Ձևավորել աշխատանքային խումբ, որը կմշակի ՀՄՀ-Հայաստան ՇԽ առաջիկա ընտրությունների կարգը, կներկայացնի ՇԽ-ին, այնուհետև լայն հասարակության քննարկումներին, որից հետո միայն ներկայացնել կարգը համապատասխան կառավարման օղակների հաստատմանը:</p>
--	--	---